



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 17 >> փետրվարի 2023թ.

N ՄՈ/ 63 -Ա

Ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետի պահանջները, կրթության բնագավառում տիրող իրավիճակի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Լուկաշինի Հունան Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց», «Նորապատի միջնակարգ դպրոց», «Տանձուտի միջնակարգ դպրոց», «Այգեկի Մուշեղ Մովսիսյանի անվան միջնակարգ դպրոց» և «Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ներում մշտադիտարկում և կազմակերպության գործունեության վերահսկողություն իրականացնելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ն. Սարգսյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել քսանհինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետին (Ա. Համբարձումյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման համար տրամադրել ծառայողական հերթապահ ավտոմեքենա:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)' սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

17.02.2023



VERIFIED OCSP 17.02.2023 12:19:22 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

**Կազմ
աշխատանքային խմբի**

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետարանի կրթության, մշակույթի և
սպորտի վարչության կրթության բաժնի պետ՝

Նաիրա Սարգսյան.

Աշխատանքային խմբի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետարանի կրթության, մշակույթի և
սպորտի վարչության կրթության բաժնի
գլխավոր մասնագետի պաշտոնակատար՝

Շուշանիկ Խաչատրյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետարանի կրթության, մշակույթի և
սպորտի վարչության կրթության բաժնի
ավագ մասնագետ՝

Գարրիել Գևորգյան:

Գլխավոր քարտուղար՝

Ա. Հովհաննիսյան

 Недействительная подпись
XIՐԻՍՅԱՆ
VERIFIED OCSP 16.02.2023 16:35:54 GMT+4
Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023